

Երկրորդ զարդարած է «տնօրինականով», այսինքն տնօրինական ոտանաւորներով կամ կաֆաներով, զորոնք որոշելու համար Խաչատրոյ կամ Գրիգորի հատուածներէն երբեմն «Զ.Ք.», համառօտագրութիւնն կը դնէ քովը եւ երբեմն «Զաքարիա եպիսկոպոս», Բայց կան հատուածներ ալ որոնք թէեւ անանուն են, բայց իր գրիչը մատնանիշ կ'ընեն. Է. Տաշեան (անդ, էջ 132) նշանակած է այսպիսի քանի մը հատուած:

Այսպիսի անանուն հատուածներն ալ պատշաճ համարեցանք ստորեւ ի շարս Զաքարիայի հատուածներու զետեղել՝ ոչինչ հակառակ ապացոյց գտնելով Տաշեանի հաստատութեան դէմ: Մտադրութեան արժանի է հոս Է. Տաշեանի խօսքերս. «Ասոնցմէ դուրս թէ կան ուրիշ կտորներ Զաքարիայի՝ որոշ չենք կրնար ըսել: Ինչպէս նաեւ ոչ այն ամէնն՝ որ ձեռագրաց մէջ Զաքարիայի կը տրուի՝ պէտք է որ ապահովութեամբ վերջնոյս ըլլայ. նոյնպէս նաեւ կրնան շատ մ'այն անանուն կտորներու մէջ Զաքարիայի ըլլալ, ինչպէս արդէն քանի մ'այսպիսի կտորներ յիշեցինք» (էջ 132): Ի հարկէ հոս խօսքն մեր Թ. ԳՅի վրայ կարելի չէ տարածել, քանի որ նախագաղափարն ինքնին Զաքարիայի գրչէն է: Շատ աւելի դիւրին պիտի ըլլար այս կէտիս մէջ մէն մի հատուածներու հեղինակն ճշգրտել, եթէ ամբողջութեամբ մատչելի ըլլար մեզ երկրորդ Օրինակն Զաքարիայի ձեռքէն: